

գերազանցապէս զգայուն մեծ հոգին երկու արիւնակից եղբայրների միջեւ գտնուած ատելութիւնը ջնջեց եւ ազգը առաջնորդեց ամենաազնիւ ձգտումների, եւ ահա այս ամէնի համար իր վեհաշուք ու նուիրական անունը, որ գեղեցիկ զգացումների մարմնացումն է, դարէ դար անեղծ պիտի մնայ ու նրա հոգին պիտի սաւառնի հայութեան վրայ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Պրահման կրօնական մը քրիստոնեայ ծանօթի մը հետ խօսակցութեան ընթացքին կ'ըսէ. «Քրիստոնէութեան մէջ շատ բաներ կան որոնք կը գտնուին նաեւ մեր կրօնքին մէջ, բացի մէկ բանէ»:

«Իսկ ո՞րն է այդ», հարց կու տայ քրիստոնեան, որուն Պրահմանը կը պատասխանէ. «Փրկիչ մը»:

Քրիստոսի ուսուցման և գործօն կեանքի երեք կարճ տարիները աւելի նպաստած են մարդկութեան վերածնունդին և հոգիի ազնուացման, քան բոլոր իմաստասէրներու և բարոյագէտներու դարերու հետազօտութիւններն ու յորդորները:

Ձեր թշնամիները մի՛ ատէք կիրքով, որովհետեւ կրնայ ըլլալ որ հաշտուիք:

Ազահը իր ինչքերուն տէրը չէ, այլ ինչքերն են իր տէրը:

Եթէ իմաստութիւնը ուրիշին բանականութիւնն է, ուրեմն առաքինութիւնն ալ՝ սրտինը:

Մարդիկ կառավարելու համար սահմանուած իշխանաւորը պարտի ճանչնալ մարդերը:

Իշխանաւորները կը տկարանան երբ փորձեն օրէնքէն աւելի զօրաւոր ըլլալ:

Կիրքերը գոհացնելէ աւելի մեծ հաճոյք մը կայ, այդ ալ յաղթահարելն է անոնց:

Երբ ոսկին խօսի՝ ամէն լեզու կը լռէ:

Շատ խօսք ունեցող մարդը քիչ գործ կը տեսնէ:

Կեանքը կ'իմաստաւորուի այն ատեն՝ երբ ուրիշի համար կ'ապրուի:

Երանելի է ան՝ որ չի ցանկար ուրիշի ունեցածը:

Թերեւս՝ աղքատին շատ բան կը պակսի, սակայն ազահին՝ ամէն բան:

Ժամանակը կը փոխէ նոյնիսկ դատաւորին ակնոցը:

Մի՛ ըլլաք չարախօս՝ նոյնիսկ ձեր չարախօսներուն: